Հ Ր Ա Մ Ա Ն N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2018Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 38-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 39-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2015 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 1996 թվականի օգոստոսի 29-ի թիվ 310 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի N 444-Ա հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N38-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 2-րդ կետում «աշխատակազմի ղեկավարին» բառերը փոխարինել «աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նարեկ Ղազարյանին» բառերով,

2) Հրամանը լրացնել նոր «2.1-րդ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նարեկ Ղազարյանին՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնել տեղեկատվություն նախարարության աշխատողների կողմից տվյալ ամսվա ընթացքում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները» պահպանելու նկատմամբ իրականցվող վերահսկողության արդյունքների մասին, ինչպես նաև ներկայացնել առաջարկություն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին:»,

3) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի.

ա) 11-րդ կետը լրացնել՝

«, բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության շենք առանց փաստատթղթի մուտք գործելու աշխատակիցների ցուցակի:»,

բ) 11-րդ, 13-րդ և 32-րդ կետերում՝ «Հալաբյան 41ա» բառերը փոխարինել «Վազգեն Սարգսյան 3/8» բառերով:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2015 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» N 39-Ա հրամանը:



ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ